

ԱՅԼ ԵԿԵՂԵՅԻՆՆԵՐ

ՊՐԱԽՈՍԼԱՆ ԵԿԵՂԵՅԻ ՌՈՒՍՔՅ

«Перк. Вѣстникъ»-ում կարդում ենք.

— Մեր ժամանակներում քահանաներս իրենց առաջնորդներին խնայէս ոչ թէ հրամաններ ենք ստանում, այլ հովուապետական բարեացակամ ցուցումներ: Այդ ցուցումները պէտք է իրագործել, ոսկայն նրանք իրենց մէջ չոր դիւանական առաջադրութիւնների բնաւորութիւնն ու կերպարանքը չ'ունին: Բայց զրանից, առաջնորդներն իրենց իրաւունք չեն համարում միջամտել այնպիսի գործերին, որոնց կամպէտէնտ (գլխավ-ձեռնհաս) կարող են լինել միայն քահանաները: Ի հարկէ լի-նում են նաև դէպքեր, երբ պատճառաբանեալ որոշումները քանդում են առաջնորդների կողմից և այդ առանց պատճառները բացատրելու, բայց այդպիսի դէպքերը, որ անցեալ-ներում սովորական էին, այժմս այնքան չեն կրկնուում: Եպիս-կոպոսի և թեմի միւս հոգևորականների յարաբերութիւնները դառնում են սլաշտօնակցական, թէ և զանազան ատիճան-ների կոնգնաժ. կարծէք այլ ևս չկայ մի կողմից ոչ հպարտ փառաբանութիւն և միւս կողմից ոչ էլ ստրկական ստորա-ցումս, թէև տեղ տեղ հին խմորը դեռ մնում է: Օրինակ. նո-րերս մի թեմում հրամանագրուած էր, որ կղերիկոսները եպիս-կոպոսին ներկայանալիս և նրա օրհնութիւնն հացեղին պարատ-ւոր են խոնարհ դլուխ օտալ մինչև գօտին: Մատները հալելով քղանցքին: Առառաջնորդների այցելութիւններն ու քորոզները նկարագրւում են այնպիսի կեղծաւորութեամբ, որ դարմանում ես թէ ինչպէս այդ կողիս, կեղծ և կիսով չափ սուտ գո-մեոտները կարողանում են լոյս տեսնել թեմական օրդաննե-րում, արգելքի չհանգիպելով թեմական իշխանութեան կողմից: Բայց՝ այդ հին ժամանակի մնացորդներն, ըստ երևութին ար-դէն սակաւաթիւ են:

Նայն թերթի № 19-ում կարդում ենք.

Հոգևոր գործիչների ծայրահեղ անբարեկարգութիւնը վեր-ջին ժամանակներս բարձրացրին առելի քան հասունացած վեր-

դովեցուցիչ խնդիրը նրանց շուտափոյթ բարեփոխութեան մասին: Մամուլը ցոյց է տալիս և չարեաց պատճառներ և նրանց հեռացնելու բնական ճանապարհ: Պ. Գորեային (С. Петерб. Вѣдомости № 96-ում) կարծում է, որ հոգևոր դպրոցները կազմուեն, եթէ նրանցից միանգամայն հեռացուին վանականները: Նրա կարծիքով վանականներն իրենց գործին կամ անփոյթ են վերաբերում և նայում են մանկավարժական գործունէութեան վրայ, որպէս ժամանակաւոր դադարի առաջնորդութեան հասնելու ճանապարհին, կամ ուսանողների վզին ֆանատիկոսաբար փաթաթելով ասկէտական կարգապահութիւն, զայրոյթ են առաջ բերում նրանց մէջ: Հոգևոր դպրոցների դասաւանդներից մինը արդարացի պատասխանում է այդ պարոնին, որ միայն վանականներով չի կարելի բացատրել ամբողջ չարիքը, որ վանականների մէջն էլ են հանդիպում իդէալիստ մարդիկ, որոնք նուիրում են մանկավարժական գործունէութեան:

Զարիքը հէնց հոգևոր դպրոցների կազմի մէջն է, կազմի, որը չափազանց անշարժ է և պահպանողական, որը մեծ դժուարութեամբ է ենթարկւում ուսման և դաստիարակութեան գործը լաւացնելու վերաբերեալ կեանքի ցուցումներին. առաւելապէս մեղաւոր է այն ծանր, սպանիչ և խեղդող միջնորդութեան, որը իշխում է հոգևոր վարչութեան բոլոր խաւերում: Իսկապէս հոգևոր վարչութեան մէջ ամենից հիմնաւորապէս բուն է գրել անհոգի բիւրօկրատիան և նրա խաւերումն է դաստիարակւում հոգևոր լուսաւորութեան գործիչների այն խումբը, որոնց մենք տեսնում ենք հոգևոր դպրանոցների վարիչների ծանր պաշտօններում:

Թէ վերատեսուչները, թէ տեսուչները և թէ վերահացունները՝ ինչպէս հոգևորական, այնպէս էլ աշխարհական, ինչպէս որ բնորոշում է թղթակիցը, մեծաւ մասամբ ուղն ու ծուծով բիւրօկրատներեն, որոնք նախ քան իրենց իշխանաւորական կոչման հասնելը, կորցրել են ամենայն կենսունակութիւն և իրենց բոլոր ոյժերը գործ գրել անձնական բարեկեցութիւն ոտեղծելու վրայ:

«Նրանց ամբողջ հոգսը կայանում է նրանում, որ ապահովեն իրենց պաշտօնավարական բարեկեցութիւնը, որին հասել են բռնակալ բիւրօկրատական կազմակերպութեան ժամանակ երբեմն բազմաթիւ ստորութիւններով և բարոյապէս տուժելով: Մատաղ սերնդի դաստիարակութեան կենդանի գործում նրանք ամենուրէք մոյցնում են պաշտօնէական այն սպանիչ ճնշումը, բարոյական բռնակալութիւնը, որոնք սոսկալի չափով փչացնում

են մատաղ սերունդը: Ահա մեր կարծիքով այստեղ է թագնուած այն դժգոհութեան իտիական պատճառը և հոգևոր դպրոցների ոսաների այնքան թշնամական զրդռուած դրութիւնը իրենց հարադատ almae matris-ի դէմ, որն հարկադրում է նրանց փախչիլ դէպի աշխարհային դպրոցներ, փախչիլ իրենց վարչական շրջանից: Պարզ է, որ հոգևոր կրթութեան ընդհանուր գործիչները ամենից սակաւ են ընդունակ մանկավարժական գործունէութեան բառին ամենալաւ և փորձուած մտքով»:

Իշխանաւորների այդ բնութեամբ պահպանողականութեան շնորհիւն է, որ հոգևոր դպրոցում իշխում է որքան կարելի է շատ աշակերտներին հովուական առաքելի մտքնելու կիսով չափ հարկադրական դայրացնող ձևը, առանց ուշադրութիւն դարձնելու նրանց անձնական տրամադրութեան և հակումներին: Բռնութեան և ճնշման այդ ոգին կիսամիջոցներով չի կարելի վերացնել: Հարկաւոր է արմատական-վճռական բարենորոգումն: Ամենից առաջ պէտք է արմատախիլ անել դպրոցական բնութեամբի տիպի չարիքը և հոգևոր կրթութիւնը հիմնել ազատ սկզբունքների վերայ, այն է իրաւունք տալ, որ ատուածաբանութիւնը բարձր դասարաններում սովորեն մի միայն ցանկացողները, որոնք արդէն անցած կլինին հանրակրթական դասընթացը: Այլ խօսքով հովուական դասընթացները պահել մի միայն ցանկացողների համար, իսկ մնացածներին տալ ընդհանուր կրթութիւն:

Ա. Ս. Պրուգալինը նույնպէս թերթում առաջ է բերում վիստերի մի ամբողջ շարք, որոնք ցոյց են տալիս, թէ կրօնական համբերատարութեան օրէնքն ինչպէս է գործադրում կեանքի մէջ:

Երբոր բաց էին անում հնածէսների տաճարները Մոսկւայի Ռադոֆեան դերեզմանատանը, կառավարութեան լիազօր Դ. Ս. Գալիցինը և կոմս Շերեմետևը Մոսկւայի հնածէսներին «բարեկամական խորհուրդ» տուին, որ նրանց արքեպիսկոպոս Յովհաննէոս առաջին անգամ չը մասնակցի ժամասացութեան: Ապա նոյն անձինք ասացին հնածէսներին.— ձեր եպիսկոպոսներին թոյլ կտրուի աստուածապաշտութիւն, բայց առայժմ սկզբներում և տակտի համար նրանք ժամակարգութեան չը պէտք է մասնակցեն:

Հնածէսները համաձայնուեցան: Նրանց արքեպիսկոպոս

Յովհաննէսը չը մասնակցեց այն ժամակարգութեան և մաղթանքին, որը տեղի ունեցաւ փակած տաճարները բանալուց և կարգի բերելուց յետոյ:

Անցնում է մի քանի օր և յանկարծ Բագոթեան գերեզմանատան հոգաբարձու Ի. Կ. Ռախմանովին և Ս. Կ. Կուզնէցովին կանչում են քաղաքապետի մօտ: Այստեղ նրանցից ինչ որ ստորագրութիւն են առնում, որի ճշգրիտ բովանդակութիւնը դեռ հնածէսների բազմութեանը յայտնի չէ: Ասում են, որ այդ ստորագրութիւնը զգալի կերպով սահմանափակում է հնածէսների եպիսկոպոսների իրաւունքները, նաև հնածէսներին՝ տաճարներ, եկեղեցիներ և մայր եկեղեցիներ բանալու վերաբերութեամբ: Ինչ էլ լինի, այնուամենայնիւ Մոսկուայի հնածէսները չափազանց վրդովուած են . . . Նրանցից շատերը դատապարտում են հոգաբարձուներին, որ նրանք փոքրոգութեամբ ստորագրութիւն են տուել:

Փաստն այն է, որ եկեղեցիների բացումից յետոյ հնածէսների եպիսկոպոսները դեռ չեն պատարագել և ժամատացութեան չեն մասնակցել: Շատ բնական է, որ այդ երեոյթը հնածէսների և նրանց եպիսկոպոսների ցանկութեան արդիւնք չէ: Մոսկուայի իշխանութիւնն ու ոստիկանութիւնը անթարթ հրահրում է, որ հնածէսների եպիսկոպոսները Բագոթեան գերեզմանատանը չ'երևան:

«Ահա ձեզ կրօնական համբերատարութիւն» . տխուր ու շփոթուած ասում են մոսկովեան հնածէսները: Իսկ ինչ դաւառանքին կը վերաբերի, այնտեղ գործն աւելի պարզ է դրուած. այնտեղ հնածէսների հալածանքը ոստիկանութեան կողմից, նրանց տների վրայ յանկարծական արշաւանքները, խուզարկութիւնը—դեռ նոյնքան սովորական են, որքան ապրիլի 17-ի օրէնքի հրատարակութիւնից առաջ:

Այդ բոլորը բնական է և հասկանալի հէնց այդ պատճառով, որ ապրիլի 17-ի օրէնքը լի է մութ կէտերով, երկդիմի, նենդամիտ, խորամանկ և չաւարտած նախադասութիւններով . . . Թէ ինչպէս կը լուծուին և կը պարզաբանուին այդ բոլոր մութ կէտերը պատշաճաւոր իշխանութեան կողմից, — ոչ որ չը գիտէ: Միւս կողմից մեր աղանդաւորները չեն կարող չըզգալ, որ այս բոլորիս էլ նրանք ամբողջովին կախումն ունին այն անձերից, որոնք ամբողջ քառորդ դար ոգի և ղեկավար էին ռուսական քաղաքականութեան՝ եկեղեցու, հաւատոյ և քաղաքակրթութեան, այսինքն անգութ խտրութիւնների, բռնութեանց, հոտարակական անհատական կեանքի նախաձեռնու-

թիւնը ճնշելու և վարչական անսահման կամայականութեան և ոտտիկանական ճնշումները . . .

Եւ քանի որ այդ պայմանները գոյութիւն ունին, քանի որ այդպիսի պայմաններ հրատարակող և պահպանող անձանց ձեռին է իշխանութիւնը, աւելի քան պարզամտութիւն կլինի հաւատալ կրօնական համընթացութեան կամ խղճի աղատութեան:

Այո՛, արդար զայրոյթով եղբայրակում է հեղինակը. —

Ռուս ժողովուրդը սարկութիւնից ոչ թէ ազատուած չէ, այլ դեռ այդ աշխատանքը սկսուած էլ չէ:

— Այո՛, Գօլիցին, Շերեմետե, Վարչաւայի գէներալ նահանգապետը կարող են ուղած կերպով բացատրել և դործադրել բարձրագոյն կամքն ու հրամանները, կարող են սխմել և ընդարձակել ուղած ձեռով և այդ դեռ կոչոււմ է ինքնակալութիւն և ոչ կամայական սահմանադրութիւն:

Վաճառուող փահանան.

„Биржевые Вѣдомости“ № 113-ում կարդում ենք. —

Երևանեան նահանգի Էջմիածնի ու Նիկողայոս եկեղեցու ծխատէր Բօրիս Վենետիկնովը, հայրենասիրութեամբ բոլորքուած վճռել է ծախել իրեն իւր ընտանիքով այն ռուս զբամառիոջ, ով որ կուղարկի զինուորական նախարարութեան «զոնէ երկու հալայածանաւի արժէքը», կոչելով նրանց «Բօրիս» և «Եկատերինա զաւակներով»:

Պահանջուած գումարն ուղարկելուց յետոյ, նա իրեն, իւր կնոջը, չորս աղջկերանց և որդուն դնում է «բարի աէրերի» տրամադրութեան ներքոյ և իրաւունք է տալիս «անմիջապէս պահանջել նրանց»:

Նիժեգօրոգի քաղաքացի Մինինը մի ժամանակ կոչ էր անում գրաւ դնել «կանանց և երեխաներին» Մոսկովան և Ռուսը փրկելու համար:

Այն ժամանակներում դեռ հնարաւոր էր համարուում կնոջ և որդւոց հետ վարուել ցանկացած ձեռով՝ իբրեւ սեփականութեան հետ, ճորտերին գրաւ էին դնում, փոփոխում և վաճառում՝ որպէս անշունչ առարկաներ: Բայց այդպիսի մի միտք ինչպէս կարող էր ծագել ներկայումս:

Կերեւի հայրենասիրական էքոտազով (յաւիշտակութեամբ) բռնուած Վենետիկնով քահանան չի կշռում դրութեանց տար-